



Ալեքսանդր Ծատուրյան

Հայ հեղինակի աղոթքը

Աստվա՛ծ, չեմ խնդրում քեզնից դափնիներ,
ճառեր, հոբելյան, ուղերձ, հեռագիր,

Մականունն էր «եզան գրլուխ»,
Կերած ճաշը սոխ ու լոշ:

Տունը տուն չէր, այլ հավի բուն,
Քրնում աղտոտ պուճախում.
Արհեստ շուներ նա օրն ի բուն
Ձու էր առնում, ձու ծախում:

Այսօր... Տեսե՛ք, նա մեծ մարդ է
Հա՛ն ապրուստով, հա՛ն շորով.
Ում տուն մրտնի նա տան գարդ է
Իր լի՛ ջեբով, լի՛ փորով:

Ասիական կյանքն է ատում,
Եվրոպայով շրլացած,
Առանց լաքեյ հաց չի ուտում,
Սոխն ու լոշը մոռացած:

Մեյր անելիս փողոցներում
Քիթն է ցրցում միշտ վերև.

Ինքն առաջին չի բարևում,
Բարևներն են բազմաձև'...

Պինդ հագում է, բարձրը խոսում,
Հաշվով շարժում ձեռ ու ոտ.
Ուրիշին է խելք քարոզում,
Ինքը խելքի միշտ կարոտ:

«Երկրի աղն» է իրան կարծում,
Հարգանք, պատիվ սպասում.
Ազգի կյանքում, ամեն գործում
Դեր խաղալ է միշտ ուզում:

Հոգի՛ն կըտա, որ քիթ խոթի
Հասարակաց գործի մեջ.
Հենց որ խոթեց, տե՛րն ազատի
Անսանձ «ես»-ին չըկա վերջ...

Բայց ի՞նչի հայ-եվրոպացին
Խոսքի, վեճի բրոնվելիս,
Ա՛յնքան սիրում է շի քացին
Եվ քացի է միշտ տալիս...

Ի՞նչի... Թե որ լավ միտք անեք,
Հե՛չ չըպետք է զարմանալ
Փալանը փոխած է շը երբեք
Ազնիվ նրժույզ չի դառնալ...